1997, ՀՈԿՏԵՄԲԵՐ Ա (ԹԻՒ 15)

# Քրիստոնեայ ՀԱՅԱՍՏԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԸ ՄԱՇՏՈՑԻ ԿՏԱԿԻՆ ՀԱՄԱՀՈՒՆՉ էջ 1, 3
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԼՐԱՏՈՒ էջ 2
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ էջ 4
ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍ, ՈՐԸ ՎԱՐՈՒՄ Է ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ էջ 5
ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԸՆԴԱՐՁԱԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ էջ 6
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՄՇԱԿՈՒՅԹ էջ 7
ԵԿԵՂԵՑԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ԽՐԱՏՆԵՐ էջ 8

## ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆՆ ՕՇԱԿԱՆՈՒՄ

### ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ԲԱՑՈՒՄԸ





Հոկտեմբերի 11-ին Հայ Առաքելական Եկեղեցին եւ հայ ժողովուրդը տոնեցին Սրբոց թարգմանչաց՝ հայոց գրերի եւ Սուրբ Գրոց թարգմանության հիշատակի օրը։ Ամենայն Հայոց Գարեգին Ա կաթողիկոսը, ավանդույթի համաձայն, այդ օրն այցելեց Օշական՝ իր հարգանքի տուրքը մատուցելու Օշականում հավերժորեն անմահացած Սբ. Մեսրոպ Մաշտոցին։

Օշականի Սբ. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում մատուցվեց Սբ. Պատարագ /պատարագիչն էր Հայկազուն ծայրագույն վարդապետ Նաջարյանը/։ Գրեթե 16 դար առաջ ստեղծվեցին հայոց գրերը, իսկ թարգմանիչ վարդապետները՝ Մաշտոց, Եղիշե, Խորենացի, Դավիթ Անհաղթ, Նարեկացի, Ներսես Շնորհալի, ապրեցրին, հայացրին ու կյանք տվին Աստվածաշնչին։

Պատարագի ավարտին տեղի ունեցավ եկեղեցու հյուսիսարեւմտյան կողմում գտնվող Արագածոտնի թեմի առաջնորդարանի շենքի հանդիսավոր բացումը։ Արարողությանը ներկա էին Արագածոտնի մարզպետ Հրաչյա Գրիգորյանը, Աշտարակի եւ Ապարանի քաղաքապետերը, բարձրաստիճան հոգեւորականներ՝ եգիպտահայոց առաջնորդ Զավեն արք. Չինչինյանը, Տաթեւ արք. Սարգսյանը, Սեպուհ եպս. Չուլջյանը, Վիգեն եպս. Այքազյանը, սփյուռքահայ բարերարներ տեր եւ տիկին Ժիրայր եւ Հասմիկ Գաբրիելյանները, որոնց հովանավորությամբ էլ կառուցվել է առաջնորդարանի փառահեղ շենքը։ 1995թ. որպես Ամենայն Հայոց կաթողիկոս առաջին անգամ այցելելով Օշական՝ Վեհափառ Հայրապետն ուխտեց բարեկարգել եկեղեցու հարակից տարածքը։ Նախորդ տարի բացվեց Մաշտոցի դպրատունը, այս տարի՝ առաջնորդարանը։

Առաջնորդարանի առջեւ հավաքված բազմաթիվ հավատացյալների, Մայր Աթոռից, Երեւանից եւ արտասահմանից ժամանած բազմաթիվ հյուրերի ներկայությամբ թեմի առաջնորդ Նավասարդ եպս. Կճոյանը շնորհակալություն հայտնեց Հայոց Հայրապետին ու բարերարներին՝ շենքի կառուցման համար։ Նա մասնավորապես ասաց. «Օշականյան սուրբ հողի վրա այս պահին բացում ենք դուռը Արագածոտնի թեմի առաջնորդարանի՝ ձեռամբ մեսրոպաշունչ Հայրապետի, որ փարատեց խավարը նախընթաց տխուր կացության, պայծառացրեց միջավայրը եւ իր լույս անձն էլ միացնելով ոսկեդարյան մեսրոպյան արեւ ջահին՝ առաջնորդում է մեզ բոլորիս, համայն հայությանը, ընդառաջ դեպի քրիստոնյա Հայաստանի 1700-ամյակը եւ մեսրոպագիր Հայաստանի 1600-ամյակը»։

Այնուհետեւ հուզիչ խոսքով ներկաներին դիմեց Վեհափառ Հայրապետը։ Նա ասաց. «Այսօր իմ հոգին ավելի է լցվել, քան ինչ որ կարող է տանել։ Այսօր մենք եկել ենք ոչ թե միայն պատարագին մասնակցելու, այլ եկել ենք ծնկաչոք ուխտ կատարելու, ուխտ, որը Աստծո եւ մարդու միջեւ դաշինք է։ Եւ այսօր եկել ենք ուխտ անելու Ս. Մեսրոպ Մաշտոցի անմահ կտակին հավատարիմ լինելու»։ Վեհափառը նշեց, որ երբ երկու տարի առաջ տեսավ եկեղեցու անբարեկարգ, լքված շրջակայքը, որոշեց հիմնովին փոխել այդ վիճակը եւ շնորհիվ հայրենասեր բարերարների՝ ահա իրականություն է դարձել այդ ցանկությունը։ Ավելին, Օշականը դարձել է առաջնորդանիստը նորաստեղծ Արագածոտնի թեմի, որի ստեղծման նպատակը եկեղեցին ժողովրդին ավելի մոտեցնելն է։

Բարձր գնահատելով բարերարների հայրենասիրությունը՝ Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի բարձրագույն պարգեւով՝ Սբ. Գրիգոր Լուսավորչի շքանշանով, պարգեւատրեց պրն. Ժիրայր Գաբրիելյանին։ «Այն հավատարմությունը, որ ցույց եք տալիս Ս. Մեսրոպի կտակին, այդ հավատարմությունն է այն գաղտնի ուժը, որ պահում է եւ պահելու ու զարգացնելու է մեր ժողովուրդը մայր հայրենիքում՝ Հայաստանում»,- ասաց Վեհափառ Հայրապետը։



Առաջնորդարանի շենքի բացումից հետո եկեղեցու բակում տեղի ունեցավ հոգեւոր երգչախմբի եւ ազգագրական համույթների համերգ՝ Արարատյան թեմի հայորդաց տների սաների մասնակցությամբ։

*ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ*
*«ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ»*

## ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄՆ ՈՒՆԻ ԻՐ ԱՄՍԱԹԵՐԹԸ




Արագածոտնի թեմը հունիսից ունի իր ամսօրյան՝ «Շողակնը», որը հրատարակվում է Րաֆֆի եւ Շողակ Հովհաննիսյանների օժանդակությամբ։

Թերթի առաջին երկու համարները խմբագրել է Էդվարդ սարկավագ Ֆրանգուլյանը, իսկ սկսած երրորդից՝ Արտավազդ Նազարյանը։

Առաջին եպիսկոպոսական ձեռնադրությունը Հայաստանի Հանրապետությունում՝ առաջին համար, առաջին էջ, այնուհետեւ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Հայրապետի ծննդյան 65-ամյակը եւ շարունակվում է՝ Տոնական, Հայրաբանություն, Վարք Սրբոց, Հաց հոգեւոր, Քրիստոնեական մշակույթ, Հանուն ուղղադավանության եւ իհարկե՝ Թեմական կյանք. խորագրեր, որոնք հուշում են պարբերականի կողմնորոշումը։

Թերթելով «Շողակնը»՝ ակամա մտածում ես այն օրվա մասին, երբ ամեն թեմ իր թերթը կունենա, եւ թեմերում ոչ միայն կկարդան դրկիցների հոգեւոր կյանքի մասին, այլեւ,– սկսում ես երեւակայել,– գուցե Հյուրասրահ խորագրի ներքո թեմական մի թերթը կհյուրընկալի մյուսին։

Իրականն առայժմ «Շողակն» է ու «Քրիստոնեայ Հայաստանը»», որ շնորհավորում է թերթի ծնունդը եւ պատրաստակամություն հայտնում ժամանակ առ ժամանակ էջ տրամադրելու գրչակիցներին՝ նրանց համար ավելի լայն ասպարեզ բանալով իրենց թեմի եկեղեցական կյանքը ներկայացնելու։

Նորամուտ բարի՝

*«ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ»*

